


կան, ըշեղի տկարութիւն մը ևս վրայ հասնելով, կամ հիւանդանոյներու մէկ անկիւնը իւր թշուառ կեանք կը վճարէ, և կամ իւր ընտանեաց քովիւր և իւր ընտանեաց թշուառութիւններուն չը կրնար տոկալ իւր յուսահատ կեանք բը անձնասպանութեամբ կը վճռէ, հակառակ աստուածային և մարդկային ամեն օրինաց, և այս եղանակաւ ինքը կը վերջանայ, բայց իւր թողած թշուառութիւնը կը մնայ և կը շարունակէ այդ խղճալեաց վրայ, և գնացողի ետեւէն կ'երժմայ անէծք նզովք նախատինք ու արհամարհանք։ Ահա իրենց գէմ հասակի մէջ բարւոք ընթացալը և անտեսութիւնը չը գիտցող և ինայողութեան ետեւէն չը գնացողներուն վիճակը և վախճանը։

Խորէն Վարդապետ  
Միհենալեան։



ԾՈՒՅԱՆ

Ե Ա Խ Ա Ր Ե Ա Ն Ա Յ

Շարագրեաց

Գ. Վ. Արտավազիւնաց.

Հինգերորդ դարու Հայոց Աղդի սքանչելի նահատակութեան հանդէսն, որ անմահացած է Եղիշէ Վարդապետի անմահ գրչաւ և ժամանակ ժամանակ եռանգ ու խանդ աղդած է Հայրենատէր ողիներու և բազմաթիւ երգաբաններ ու վիպասաններ յերեւան հանած աղդային գրական ասպարիվի վերայ, այս անգամն բոցավառ եւ ռանդով ողեւորած է զԴարեգին վարդապետն Արուանձտեանց, Հայոց Աղ-

գին Շաւարշանայ ծաղկիներէն Շուշան մի ընծացելու, որ հայրենասիրութեան ուղևով ուսոգուած է, քրիստոնէական ցօզով զուարթացած և Հայ Հայրենեաց արեւով ծաղկած և ուսուացած։

Սիրուն է այս Շուշան, վասն զի Հայրենասիրութեան և Ազատութեան հոս կը բուրէ։ Գեղեցիկ է այս Շուշան, վասն զի կը զրաւէ ու կը տանի մեր հագին ու սիրան այն գարն, որ Հայոց կենդանութեան գարն է, այն դաշտն, որ Հայոց քաջաց նահատակութեան գաշտն է, այն գարաստանն, որ ծաղիթլոց եղած է ոչ թէ անձրեւաբեր ամոցերէն, այլ մեր սուրբ և արիւնաբուղի վիսայից ցանեալ և ցրուեալ սպիտակ սոկերներէն։

Ով որ զՀայն նոյն դաշտն ու գարաստանն կը տանի, իւր կենդանութեան վայրն կը տանի, և ով որ կենդանութիւն կը սիրէ, պէտք է որ նոյն դաշտէն ծաղիկ մը հոտոտէ, այսօր Վարդ, վաղիւն Շուշան, ապա Մանիշակ, ապա Բոլասան, և այլն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յունաց նորնոտիր Պատրիարքն Սուրբ Յարութեան Աշխարհամատրան Տաճարին մէջ հանգիստապէս Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, և օմն եպիսկոպոսաց ձեռօք, ի ներկայութեան եկեղեցական և աշխարհական խուռն բազմութեան։

Զեռնադրութենէն զինի սպաշտօնական այցելութիւններն սկսան, և այժմ Պատրիարքական վարչութեանն նորոգ-